և ապա արդէն, երբ ընծաներ էին ստանում, թոյլատրում էին նորեկներին ներս մտնել հարսի տունը[1]։

Զաւախքում, «երբ փեսի հայրը, տղամարդ բարեկամներն և քաւորը դաւուլ զուռնի առաջնորդութեամբ հասնում են հարսնացուի տանը, տան փոքրիկներից քանիսը փակում են դուռը և միայն այն ժամանակ են բաց անում, երբ քաւորը տալիս է 20—30 կոպ.»[2]։

Զէյթունում, երբ հարսին պէտք է դուրս տանեն տանից, սորա եղբայրը կամ մօտիկ ազգականներից մէկը փակում է դուռը և թոյլ չի տալիս հարսին տանել, մինչև որ մի ընծայ, մեծ մասամբ կարմրագոյն կօշիկ, չստանայ փեսայի կողմից[3]։

Նմանապէս և Բուլանըխում, «երբ հարսը կրմեկնի հայրենական օճախից և մինչև սկեսրայրը դրսու դռան շէմքը կրփոխէ, հարսի եղբայրներից մէկը դռան կըշտին կանգնած, ձեռք կրձգէ խնամու օձիքը և կրպահանջէ աղբոր զօտին, որ ընդունուած սովորութեան համաձայն անպատճառ կրտրուի և ապա հարսնածը կրնդնի ճանապարհ»[4]։

Այս ընծաները կամ դրամական վճարները վերև բերած օրինակների մէջ ուրիշ ոչինչ են, եթէ ոչ մի տեսակ փրկանքի դաղափարի մարմնացումն, փրկանքի որ ստիպուած էին լինում առնանդողները վճարել հարսի ազգականներին կատարած յափշտակութեան համար։ Այդ փրկանքի ներկայութիւնն այստեղ դարձել է բարեփոխուած ու իւր սկզբնական նշանակութիւնը կորցրած մի ձևականութիւն, որ երկար պատմական զարգացման հետևանք է։ Այդ փրկանքի գոյութիւնը մեզ ծառայում է իբրև մի փաստ, որտեղ թաղնուած է յետագայում գնմամբ կա-

---

[1]) Свадебные обычаи ахалцыхскихъ армянъ—Этнографическое Обозрѣніе, 1889 г. № 1.

[2]) Ե. Լալայեան—Զաւախք՝ եր. 139.

[3]) Յ. Ալպահվերդեան—Ունիա կամ Զէյթուն.

[4]) Բենոն՝ Բուլանըխ, «Ազգագր. Հանդէս» 1899 թ. գիրք Ե.

Հայ մատենագրության թուանշային գրադարան